Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն օտարելու և օտարման մեկնարկային գին սահմանելու մասին որոշման նախագծի

Որոշման ընդունումը բխում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջից, համաձայն որի համայնքի ավագանին համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը օտարելու և մեկնարկային գին սահմանելու վերաբերյալ: Ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է օտարել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը, սահմանել մեկնարկային գինը:

Նաիրի համայնքի Պռոշյան գյուղի 07-053-0229-0058 կադաստրային ծածկագրով առկա է 0,25398 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք:Նշված հողամասը աճուրդ-վաճառքով օտարելու, գնորդի կողմից ներդրումներ կատարելու (մելիորացիա, ոռոգման համակարգ) դեպքում կվերածվի մշակության համար պիտանի հողատեսքի, որը կարող է օգտագործվել որպես վարելահող, ինչպես նաև հնարավոր կլինի հիմնել բազմամյա տնկարկներ:

Աշխատակազմի բնապահպանության,
գյուղատնտեսության և հողաշինության
բաժնի պետ՝ Բ. Թադևոսյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Համայնքային սեփականություն հանդիսացող մեկ միավոր գյուղատնտեսական նշանակության հողամասի աճուրդ-վաճառքի մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին:

Աճուրդ-վաճառքով օտարվող համայնքային սեփականություն հանդիսացող մեկ միավոր 0,25398 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքը օտարելու մասին որոշման ընդունումը (կադաստրային արժեքը - 17144 դրամ), Նաիրի համայնքի բյուջեում ենթադրում է 200 000 դրամ եկամուտների ավելացում, ինչպես նաև աճուրդի ժամանակ կատարված քայլերի արդյունքում հավելվող լրացուցիչ գումար:

Աշխատակազմի բնապահպանության,
գյուղատնտեսության և հողաշինության
բաժնի պետ՝ Բ. Թադևոսյան